ԵՐԵՎԱՆԻ
ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ
ԱՅԳԻ

ԵԿ-038-2023
12.05.2023թ.

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ-Ի
ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ,
ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ԱՆԴՐԱՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ
/ՀՀ, 0010, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1/

Հարգելի՛ պարոն Գրիգորյան,

«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի /այսուհետ նաև՝ Այգի/ կարիքների համար 2022 թվականի նոյեմբերի 21-ին հայտարարված սննդամթերքի և կերերի ձեռքբերման ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/1 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում 7, 33, 39, 41, 58, 59, 64, 65, 71, 81, 82, 86-ից 95-րդ չափաբաժինների մասով, որպես ընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել «ԳԱՍՊԱՐ 06» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ 04444865, գործունեության հասցե՝ ՀՀ, Զինավան 5/ԴՕՍ3/37 բն, Հովտաշատ 0813, Հովտաշատ Արարատ Հայաստան, հեռ.՝ +37477-829911, էլեկտրոնային հասցե՝ maria210909@mail.ru), որի հետ 33, 39, 41, 58, 59, 64, 65, 71, 81, 86-ից 95-րդ չափաբաժինների մասով 05.01.2023թ-ին կնքվել է ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/1-4 ծածկագրով, իսկ 7-րդ և 82-րդ չափաբաժինների մասով 01.02.2023թ-ին կնքվել է ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/1-8 ծածկագրով ապրանքի մատակարարման պետական գնման պայմանագեր (այսուհետ՝ Պայմանագրեր), որոնց շրջանակներում, հետագայում՝ ֆինանսական միջոցների հատկացմամբ պայմանավորված՝ համապատասխանաբար 05.01.2023թ-ին և 31.01.2023-ին կնքվել են նաև ֆինանսական միջոցների հատկացման և վճարման ու գնման ժամանակացույցների հաստատման համաձայնագրեր:

25.04.2023թ-ին «ԳԱՍՊԱՐ 06» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է գրություն, համաձայն, որի ընկերությունը չի կարող կատարել Պայմանագրերով ստանձնված պարտավորությունները, քանի որ գտնվում է լուծարային գործընթացում:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև՝ այն հանգամանքը, որ «ԳԱՍՊԱՐ 06» ՍՊԸ-ն թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ Այգու կարիքների համար սնունդի ձեռքբերումն ունի կենսական նշանակություն և կարող է հանգեցնել կենդանատեսակների անկումների և ամբողջովին խաթարել Այգու գործունեության բնականոն ընթացքը, Այգու կենդանիների կերակրման առաջնահերթությամբ և հրատապությամբ պայմանավորված,

ՀՀ, Երևան 0025,
Մյասնիկյան 20
+374 10 562 362
www.zoo.am
info@zoo.am

«ԳԱՍՊԱՐ 06» ՍՊԸ-ի հետ կնքված ապրանքի մատակարարման ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/1-4 և ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/1-8 ծածկագրով պայմանագրերի չմատակարարված քանակությունների մասով նշյալ Պայմանագրերի միակողմանի լուծվել են:

Հաշվի առնելով վերոգրյալը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջները, ինչպես նաև հաշվի առնելով, որ «ԳԱՍՊԱՐ 06» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումների վերաբերյալ տուժանքի համաձայնագրերում որպես վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն նշված է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն (19300 934740500 բանկային հաշվեհամարով), խնդրում ենք համաձայն 04.01.2023թ-ի ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/1-4 ծածկագրով պայմանագրի շրջանակում ներկայացված և 30.01.2023թ-ին ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/1-8 ծածկագրով պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքների մասին համաձայնագրերի, «ԳԱՍՊԱՐ 06» ՍՊԸ-ից գանձել ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/1-4 ծածկագրով պայմանագրի չմատակարարված քանակությունների մասով 788,948.00 (յոթ հարյուր ութսունութ հազար ինը հարյուր քառասունութ) ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման համար և 1,183,422.00 (մեկ միլիոն մեկ հարյուր ութսուներեք հազար չորս հարյուր քսաներկու) ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման մասով, ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/1-8 ծածկագրով պայմանագրի չմատակարարված քանակությունների մասով 235,110.00 (երկու հարյուր երեսունհինգ հազար մեկ հարյուր տաս) ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման համար և 352,665.00 (երեք հարյուր հիսուներկու հազար վեց հարյուր վաթսունհինգ) ՀՀ դրամ որակավորման ապահովման մասով, ապահովելով դրանց փոխանցումը վերոնշյալ տուժանքի մասին համաձայնագրի շահառու կողմ հանդիսացող՝ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի բանկային հաշվեհամարին («ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ, Հ/Հ 11500352711227):

Կից՝ ներկայացնում ենք ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/1 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «ԳԱՍՊԱՐ 06» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրերի (ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/1-4 և ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/1-8 ծածկագրով) և համապատասխան համաձայնագրի պատճենը, ինչպես նաև՝ տվյալ պայմանագրերի շրջանակում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ տուժանքների տեսքով ու վճարման թիվ 1 և 2 պահանջագրերը՝ յուրաքանչյուր պայմանագրի մասով առանձին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
«ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ» ՀՈԱԿ-Ի
ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ ԳԻՏԱԿԱՆ ԳԾՈՎ
ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂ **ԱՇՈՏ ԱՍԼԱՆՅԱՆ**